

ԹԻՐՁԻ ԳԵՎՈՒԹԻՒՆ Ի ԿՈԲ ՇԱԲԻ.

Պատմութեան և Գրակալ. ԲԱՅՑ
 ԱՐԱՐԱՏ,
 ԲԻԲԼԻՈՆԵՐԻ
 Առաջնութեան

Նորոյ երկինց եւ նորոյ երկրի ըստ աւետնոց
 հայցեալ ոպապիցիմք, յօրս արդարութիւնն բաս-
 է. (Ք. Գեորգ. Գ. 43):

Ի շնորհաւարաժիշխան նոր պատույտ Արարատի սիրելի ընթեր-
 ցողաց կցանկամ նույիրել մի համառօտ խորհրդածութիւն այն
 Յէտիւն մասին, որը իւրաքանչիւրը մեղանից միշտ տածումէ
 իւր հոգւոյ մէջ դէպի ի ապագայ լաւագոյն կեանքը եւ այն յու-
 ոյ և ախիւրունեան մասին, որ մեր ամենիս միակ ուղեցոյն ու
 առաջնորդը պէտքէ լինի մեր ներկայ կենաց մէջ, որի մասին
 Առաքեալն ասումէ « նորոյ երինչ և նորոյ երինչ ըստ առեւթեաց » հա-
 յեցեալ սպառեցէմ, յուզ Արդարունեան բնակիւ » :

Ճշմարիտ չէ ընթերցողք, որ մեք ամենքս, քանի կամք ու ապ-
 րումնք, միշտ մեր ապագայի մէջ սիրումնք աւելի բարիքներ
 գուշակել, քան չարիքներ. ապագայի մէջ միշտ մենք կեանքի
 բարւոքումն ենք գուշակում: Հիւանդը մոտածումէ թէ՝ ահտ
 կլաղգուրուի առողջութիւնս եւ կաղատուիմ զիս տանջող
 մահճիցս: Աղքատը թէ՝ Աստուծոյ յաջողութեամք շաւտով գոր-
 ծերս կարգի կդնեմ ու կհարստանամ: Ընտանիքի հայրը թէ՝
 ահա որդիքս կմեծանան եւ իւրեանց աշխատանքով իմ ըեռս
 կթեթեւացնեն եւ ես ու ընտանիքս աւելի բաղդաւոր կինիմք:
 Այրիացած մայրը թէ՝ ահա որբուկներս կմեծանան եւ աշխա-
 տանքի ձեռք զարկելով, գոնէ ես կհանգստանամ: Օտա-
 րի խնամատարութեամք ապրող որբուկները եւս թէ՝ ահա կդայ
 ժամանակը, երբ մեք եւս կլինիմք նոյնպիսի անկախ ու աղասի
 մեր աշխատանքով ապրող մարդիքներ, ինչպէս եւ ուրիշները
 Զախորդութեանց մէջ տագնապւողները ակնդէտ կսպասեն յա-
 ջողութեանց: Ոի խօսքով իւրաքանչիւրը մեղանից ապագայում
 աւելի լու կեանք եւ բարիքներ է ակնկալում:

Բայց մեր այս ամենն նախագծերը եւ յոլուերը կատարվումեն
 միշտ իսկ մեր ակնկալութեանց համեմատ միշտ յաջողվածէ
 մեղ ստանալ այն ինչ, եւ ինչպէս ս ցանկանումենք: Քիչ է ոլո-

տահում, որ հիւանդը իւր առողջութիւնը վերականգնելու յուսով նոյն հիւանդութեամբ մոնումէ գերեզման եւ աղքանութշուառը իւր գործերի յաջողութեան եւ վիճակի բարւորման յուսով ապրելով, մնումէ նոյն վիճակում մինչեւ իւր մահը: Քիչ է պատահում, որ իւր որդիներով բարի օրեր տեսնել յուսացող հայրն աւելի վատ օրեր է տեսնում, եւ իւր որբուկների մեծանալով հանգստութեան յուսացող այրիացեալ մայրը աւելի գտնն, չեծութեան օր ու գիշերներ է անցուցանում: Քիչ է պատահում, որ իւրեանց յարեռնս հասանելով ազատ, անկախ մարդիկ լինել յուսացող որբուկները իւրեանց անցած օրերին երանի են տալիս: Քանի քանի մարդիկներ գոնէ ես տեսած եմ, որ իւրեանց անցած, գնացած օրերի վերայ աւելի երանութեամբ ու գովութեամբ են խօսում, քան ներկայի, որը վատ ասել չէ կարելի: Հարուստներն ու մեր աչքին բազդաւոր երեւացողներն անգամ անբաւականութիւն են ցոյց տալիս իւրեանց ներկայ վիճակից եւ որտակէզ հառաջանօք են մտաբերում իւրեանց անցեալ կեանքի անհոգ օրերը եւ մի եւ նոյն ժամանակ ապագայում աւելի բազդաւոր ապրելու յուսալով ակամայ ցոյց են տալիս մի տեսակ ձգտումն գէպի լաւագոյն կեանք:

Խակ այս ի՞նչ է նշանակում, որ ոչ միայն աղքատներն ու մեզ անբազդ երեւացողներն այլ բազդաւոր կարծուածներն անգամ՝ իւրեանց կեանքը ախորժելի կացուցանելու ամեն միջոցներն ունենալով հանգերձ բաւական չեն ներկայ կեանքով, այլ շանկանումեն կետնքի այլտիվոխութեան՝ տածելով իւրեանց մէջ մի տեսակ ջերմ ձգտումն գէպի աւելի լաւագոյն կեանք:

Այդ նշանակումէ՝ որ մենք պանդուխտ եւ անցաւոր եմք այս կեանքի մէջ, որ այս երկրաւոր կեանքը մեր խևական կեանքը չէ, որի համար ստեղծուած եմք: Նշանակումէ, որ այս երկիրը մարդոյ սեպհական տունը չէ, այլ մի աքսորավայր, հավիտ աքտասուաց եւ հեծութեանց: Խակ մի աքսորական կարող է լինել ցաւերից ազատ եւ կատարեալ երջանիկ այն տեղ, ուր չունի ոչինչ սեպհական: Կարող է իւր հայրենիքից հալածուած յանցաւորը ապրել երջանիկ այն տեղում, որ նշանակուած է նորա համար իբրեւ պատէավայր եւ տե-

զի փորձանաց եւ ուղղութեան։ Մի թագաւոր կամ իշխան կարող է բաւական լինել այն տեղ, ուր հակառակ են ընթանում իւր կամաց այն ամենը, որոնք երբեմն հլու հպատակ էին իւր ակնարկութեանը Այս այսպիսի մի աքսորական, հայրենիքից հալածուած յանցաւորը եւ իշխանութիւնից զրկուած իշխան մեք մարդիքս եմք ներկայ կեանքիս մէջ, ուր ամենայն ինչ մեղ օտար են, ամենայն ինչ ցաւօք եւ հեծութեամբ եւ ամեն մի քայլափոխ՝ բարոյական պատերազմ՝ ընդդէմ կրից, ընդդէմ մեղաց եւ ընդդէմ նիւթական եւ բարոյական թըշւառութեանց։ Որպանից զարդ տեսանելի է, որ մեր կեանքը այս աշխարհով չէ կարողանում սահմանափակուիլ, մեղ համար տնօրինուած է ապրիլ մի այլ աւելի լաւագոյն կեանքով, որին մարդս ինքնաբերաբար միշտ ակնկալում ու ձգտումէ, որի համար Առաքեալն առումէ «Նորոյ Երինից և Նորոյ Երին ըստ Ա.Ե.Պ.Ե.Ա. հայեցեալ սպառչցեմ», յորս արդարութեան բնակէ»։

Տայց չնայելով, որ մարդս մտնումէ այս աշխարհը ցաւօք ապրումէ սորանում ոչ այնպէս, ինչպէս ինքն է կամենում, չնայելով, որ մեր այս աշխարհում վարած կեանքը լինելով լի ամենաանառակ վշտերով, նոյնչափ դառն ու դժուարատար է, որչափ երկարատեւ, չնայելով այս ամեն զգուեցուցիչ հանգամանքներին, այնու ամենայնիւ մարդիք սիրումեն ապրել, եւ ամեն կարելի միջոցներով պաշտպանումեն կեանքը, այնպէս որ՝ մարդկանցից ամենաթշտառն անգամ, որի համար կեանք առածք մի ծանր բեռն է, սիրո չէ անում կարճել նորան իւր կանքով. միայն խելագարներն ու անհաւասներն են դիմում երեմն ինքնապանութեան։ Խոկ այս երեւոյթը նոյնպէս չէ ապացուցանում այն մեծ ճշմարտութիւնը թէ՛ մեր այս ներկայ կեանքը մահով չէ վերջանում, այլ փոխանցվումէ դէպի մի այլ կեանք, եւ հետեւաբար թէ՛ մեր այս ներկայ կեանքը մի պատրաստութիւն, մի անցը է դէպի մի այլ կեանք. այլապէս անկարելի կլինէր հանգիստ հոգւով տանել այս կեանքի այսափի նեղութիւնները եւ հետեւաբար՝ առհասարակ տաելի կլինէր այս կեանքի երկարութիւնը, եթէ չտածէինք յայս թէ՛ անշուշտ կայ մի աստուածային խստումն մի առելի լաւագոյն կեանքէ այս կեանքից բաժանուելուց յետոյ ըստ Առաքեցն «Նորոյ Երինից և Նորոյ Երին եւ Երին»։

Աւրեմն թէ՛ շուտ եւ թէ՛ անագան պէտքէ գայ ժամանակ, երբ իվոխուսի ամենայն ինչ, երկինք եւ երկիր: «Եկեղէջ տուումէ Առաքէալը, օր Տետրա էբրէ զի՞ո՞լ, յո՞րո՞մ էբին+ բաժնապատ անց-ցն, և բնու-ըն-ն հրով էնդալ լուծցի, երիբ և ո՞յ է նմա գործ+ գործնիցն»: (Յ. Պետր. Դ. 10) եւ այնուհետեւ կդադարի մեզա-նում անհալ-ըն-ն ու յոյսը, որով մեր ամբողջ կեանքի ընթաց-քում տոշորփումենք չարաչար, կդադարիմք, այս, այնուհետեւ յո՞ւալ-ց «զի զոր տեսանէ ոք, զի՞ եւս յուսայ». ակներեւ կտեսանեմք մեր ակնկալած նոր երկինքն ու նոր երկիրը, ուր այլ եւս չեն վրդովիլ մեր այն նոր կեանքի երջանկութիւնը ոչ հիւանդութիւնք, ոչ վիշտք եւ ոչ հեծութիւնք եւ ուր յա-ւիտեան կթագաւորէ երջանիկ կեանք:

Բայց այդ նոր երկնքի ու երկրի երջանիկի ընակիցներ գըր-ւելու համար մեղ մարդկանց եւս անհրաժեշտ է նորոգուիլ որովհետեւ դորանցում կարող են միայն բնակուիլ նոքա, ո-րոնք ներկայ կենաց մէջ ազրել են Ա.-Եպարքանիան արդար-նեանք, ճշմարտութեանք և անոն: Ամբարտաւան, կեզծաւոր, ա-նիրաւ, նախանձու, ատեցող, խարերայ եւ շատ ուրիշ այսօ-րինակ հակաքրիստոնէական կեանք վարող մարդիկ անդ չու-նին այն նոր էնդալի և նոր երիբ մէջ:

Նորոգենք ուրեմն, ընթերցողք, նոր տարւոյս հետ եւ մեր կեանքը բարի վարք ու բարքով. թող հին տարին տանէ, անհե-տացնէ իւր յաւիտենականութեան ովկիանու մէջ մեր հնացած չար գործերն ու մարերը. նորոգուենք ու զարդարուէնք այն ա-մեն բարի գործերովն ու մաքերովը, որոնք հաճոյ են Աստուծոյ եւ օգուտ մարդկութեան: Երբէք չմոռանանք, որ մեք քրիս-տոնեայ եմք եւ պարտաւոր եմք ապրիկ Քրիստոսից մեղ աւան-դած սուրբ օրէնքներով, մեր մարդկային տկարութեան նե-ցուկ խնդրելով նորա օգնականութեան շնորհը. ամենայն ա-չալրջութեամբ քննենք մեր անձը, հսկենք մեր ամեն գործո-ղութիւնների վերայ, որպէս զի արդար կացուցանելով մեր ան-ձը Աստուծոյ առաջ, կարող լինիմք յաւիտեան երջանիկ ընա-կիցներ գրուելու այն նոր երկնքին եւ նոր երկրին, որի մէջ, ոստ առաւածային յայտնութեան, արդարութիւն միայն կա-րուչ է ընակիլ: